Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2022 թվականի ապրիլի 5-ի թիվ 55-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

2022-08-02

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 127-Ն
02.08.2022

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2022 թվականի ապրիլի 5-ի թիվ 55-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Հրապարակման ամսաթիվ՝ 04.08.2022

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և «է» կետերը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ո ւ մ է.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2022 թվականի ապրիլի 5-ի «2022-2023 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Եղիշե Չարենց-125», «Հայոց բանակի կազմավորման 30-ամյակ» ոսկե և «Հայոց բանակի կազմավորման 30-ամյակ», «Օգանեսոն (Og)», «Դավիթ Բեկ», «Օհան Դուրյան-100» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու մասին» թիվ 55-Ն որոշման 3-րդ կետում «օգոստոսի 22-ից» բառերը փոխարինել «սեպտեմբերի 13-ից» բառերով։

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող

օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյան

2022 թ. օգոստոսի 3, ք. Երևան